

Ես ԱՐԴԵՆ ՈՒՆԵՄ առողջության
ապահովագրություն:
Ինչպե՞ս Առողջապահական բարեփոխում
ները կազդեն իմ վրա:

- ◆ Ես ունեմ Medi-Cal: Դուք կարող եք պահել Ձեր Medi-Cal-ի առողջության ապահովագրությունը: Լրացուցիչ տեղեկություններ կարող եք ստանալ dpss.lacounty.gov/dpss/health կայքից կամ զանգահարելով **1-877-597-4777** հեռախոսահամարով:
- ◆ Ես ունեմ Medicare: Դուք կարող եք պահել Ձեր Medicare-ը: Առողջապահական բարեփոխման օրենքը կարող է ավելի պակասեցնել Ձեր առողջապահական ծառայությունների արժեքը: Դուք այլևս չեք վճարի կանխարգելիչ խնամքի համար, ինչպիսիք եք քաղցկեղի սկրինինգը, պատվաստումները, գրիպի դեմ պատվաստումը և առողջության ընդհանուր վիճակը ստուգելու համար բժշկի այցելությունները: Լրացուցիչ տեղեկություններ կարող եք ստանալ www.medicare.gov կայքից կամ զանգահարելով **1-800-633-4227** հեռախոսահամարով:
- ◆ Ես ապահովագրություն ունեմ իմ աշխատանքի միջոցով: Դուք կարող եք պահել Ձեր առողջության ապահովագրությունը: Առողջապահության օրենքը չի ստիպում աշխատողներին փոխել իրենց ապահովագրությունը: Լրացուցիչ տեղեկություններ կարող եք ստանալ կապվելով Ձեր առողջապահական ծրագրի կամ գործատուի հետ:
- ◆ Ես ինքս եմ գնում իմ առողջության ապահովագրությունը: Դուք կարող եք շարունակել ինքներդ գնել առողջության ապահովագրությունը: Հոկտեմբեր ամսից սկսած Դուք կարող եք փնտրել ավելի էժան առողջության ապահովագրություն Covered California-ի միջոցով (ուժի մեջ կմտնի 2014թ. հունվարի 1-ից): Այցելեք www.coveredca.com կայքը կամ զանգահարեք **1-888-975-1142** հեռախոսահամարով:

Ի՞նչ կպատահի, եթե ես ունեմ Healthy Way LA (HWLA):

- ◆ 2014թ. հունվարի 1-ին Healthy Way LA-ը կդադարի Medi-Cal: Շուտով Դուք փոստով տեղեկություններ կստանաք փոփոխությունների բացատրությամբ: Լրացուցիչ տեղեկություններ կարող եք ստանալ www.ladhs.org/hwla կայքից կամ զանգահարելով **1-877-333-4952** հեռախոսահամարով:

Ես ՉՈՒՆԵՄ առողջության
ապահովագրություն:
Ինչպե՞ս կարող եմ ՀԻՄԱ ստանալ
առողջության ապահովագրություն:

- ◆ **Healthy Way LA (HWLA)**—Սա անվճար ծրագիր է, որին կարող եք դիմել հենց հիմա: Լրացուցիչ տեղեկություններ կարող եք ստանալ www.ladhs.org/hwla կայքից կամ զանգահարելով **1-877-333-4952** հեռախոսահամարով:
- ◆ **Medi-Cal**—Հենց հիմա, սա ծրագիր է ցածր եկամուտ ունեցող երեխաների և ծնողների, հղի կանանց, տարեցների և հաշմանդամ անձանց համար: Եթե Դուք համապատասխանում եք այս դասակարգումներից մեկին, Դուք հավանաբար կարող եք դիմել Medi-Cal-ին անդամակցելու համար հենց հիմա: Ջանգահարեք **1-877-597-4777** հեռախոսահամարով կամ այցելեք dpss.lacounty.gov/dpss/health
- ◆ **L.A. Care's Healthy Kids Program**—Սա ցածր վճարով ապահովագրական ծրագիր է մինչև 5 տարեկան երեխաների համար, ովքեր իրավունակ չեն մասնակցելու այլ ծրագրերին՝ քաղաքացիության, բնակության պատճառով, կամ եթե նրանց ընտանեկան եկամուտը շատ բարձր է: Այցելեք www.lacare.org/potentialmembers/healthprograms/healthy-kids կայքը կամ զանգահարեք **1-888-452-2273**.
- ◆ **Family PACT** ը ցածր եկամուտ ունեցող կանանց և տղամարդկանց առաջարկում է անվճար ընտանիքի պլանավորման ծառայություններ և հակաբեղմնավորիչ միջոցներ: Այցելեք www.familypact.org կայքը կամ զանգահարեք **1-800-942-1054** հեռախոսահամարով:

ԱՅՍ ԾՐԱԳՐԻՆ ԴԻՄԵԼՆ ԱՆՎՃԱՐ Է

Իսկ եթե ես այս ծրագրերից ոչ մեկին դիմելու
իրավունակ չեմ:

- ◆ Վարչական շրջանի և համայնքի առողջապահական կլինիկաները պատրաստ են օգնելու ՀԻՄԱ և 2014թ-ին: Լուս Անջելեսի վարչական շրջանի բնակիչները, ովքեր չեն կարող մասնակցել այլ ծրագրերին՝ քաղաքացիություն, բնակության, տարիքի կամ այլ պատճառներով, կարող են գտնել մոտակա կլինիկան՝ այցելելով:
www.ladhs.org/wps/portal/clinicsearch.

Առողջապահական բարեփոխումներ և ԴՈՒՔ...



Ի՞նչ է նշանակում Առողջապահական բարեփոխումները:

- ◆ Դա դաշնային օրենք է, որը ուժի մեջ է մտել 2010թ-ին: Այն փոխում է Միացյալ Նահանգներում որոշ անձանց առողջապահական խնամք ստանալու ձևը:
- ◆ Դա այսպես կոչված Հասանելի խնամքի օրենքն է կամ Օբամաքերը

Ի՞նչն է արդեն փոփոխվել:

- ◆ Առողջության ապահովագրությունը պետք է ներառի ԱՆՎՃԱՐ բժշկական ստուգումը և կանխարգելիչ խնամքի մեծ մասը
- ◆ Երիտասարդ չափահասները կարող են ֆալ իրենց ծնողների առողջության ապահովագրության վրա մինչև 26 տարեկանը
- ◆ Ապահովագրական ընկերությունները չեն կարող չեղյալ համարել Ձեր առողջության ապահովագրությունը եթե Դուք հիվանդանաք
- ◆ Ապահովագրական ընկերությունները չեն կարող մերժել մանկական խնամքը, որովհետև նրանք հիմա հիվանդ են կամ նախկինում հիվանդ են եղել
- ◆ Ապահովագրական ընկերությունները պետք է Ձեր առողջության վրա ծախսեն մուծված դրամի 80% կամ Ձեզ վերադարձնեն գումարը

Ի՞նչ փոփոխություններ տեղի կունենան 2014թ. հունվարի 1-ին:

- ◆ ՆՈՐ միջոցներ մարդկանց համար ստանալու ԱՆՎՃԱՐ կամ ՅԱԾՐ ՎՃԱՐՈՎ առողջության ապահովագրություն
- ◆ Մարդկանց մեծ մասը պետք է ունենա առողջության ապահովագրություն, հակառակ դեպքում նրանք սուղանք կվճարեն
- ◆ Ապահովագրական ընկերությունները չեն կարող մերժել որևէ մեկի խնամքը, որովհետև նրանք հիմա հիվանդ են կամ նախկինում հիվանդ են եղել
- ◆ Ապահովագրական ընկերությունները չեն կարող Ձեզանց ավելի շատ դրամ գանձել կամ սահմանափակել իրենց կողմից վճարվող գումարի չափը, որովհետև Դուք հիվանդ եք
- ◆ Նախկինում խնամակալության տակ գտնվող երիտասարդը, որն 18 տարեկանում ունեցել է Medi-Cal, իրավունակ կլինի ստանալու Medi-Cal մինչև 26 տարեկանը

Ես չունեմ առողջության ապահովագրություն: Ի՞նչ նոր տարբերակներ կլինեն ինձ համար 214թ-ին:

MEDI-CAL` (Կալիֆորնիայի Medicaid ծրագիր): ցածր եկամուտ ունեցող մարդկանց համար: Ներկայումս Medi-Cal-ը հանդիսանում է բժշկական ապահովագրություն ցածր եկամուտ ունեցող երեխաների, ծնողների, հղի կանանց, տարեցների և հաշմանդամ անձանց համար:

Ի՞նչն է փոփոխվում:

- ◆ 2014թ-ի հունվարի 1` Ավելի շատ մարդ կկարողանա ստանալ Medi-Cal: Եկամտային շեմը ավելի բարձր կլինի, և երեխաներ չունեցող մեծահասակները նույնպես կկարողանան դիմել: (Տես հետևյալ աղյուսակը)

Արդյո՞ք սա ինձ համար է:

- ◆ Բացահայտե՛ք: Չանգահարեք Healthy Way LA (HWLA) իմանալու, թե արդյոք կարող եք դիմել հիմա: Այցելեք www.ladhs.org/hwla կայքը կամ զանգահարեք **1-877-333-4952** հեռախոսահամարով:









COVERED CALIFORNIA` Առցանց շուկա, որտեղ մարդիկ կարող են փնտրել և գնել առողջության ապահովագրություն և պարզել, թե արդյոք իրենք իրավունակ են ստանալու ֆինանսական օժանդակություն՝ ապահովագրությունը ավելի մատչելի դարձնելու համար: Գնեք առցանց կամ հեռախոսով:

Ե՞րբ է այն սկսվելու:

- ◆ 2013թ. հոկտեմբեր` Ազատ գրանցումը կընթանա 2013թ. հոկտեմբերի 1-ից մինչև 2014թ. մարտի 31-ը: Գրանցվեք մինչև դեկտեմբերի 15-ը, որպեսզի Ձեր առողջության ապահովագրությունը սկսվի 2014թ. հունվարի 1-ից:

Արդյո՞ք դա ինձ համար է:

- ◆ Բացահայտեք դա www.coveredca.com կայքում կամ զանգահարեք **1-888-975-1142** հեռախոսահամարով:

Եթե Դուք`...	2014թ-ին Դուք կարող եք իրավունակ լինել հետևյալի համար`...
 Անձ էք, ում եկամուտը կազմում է ավելի պակաս քան \$15,856	Medi-Cal, անվճար պետական ծրագիր:
 Անձ էք, ում եկամուտը կազմում է \$15,856-ից \$28,725	Օգնություն՝ գրպանից վճարվող ծախսերի համար, օրինակ՝ նվազագույն չափահավաքված գումար, համավճար և հարկային վարկեր (լրավճար), որը կնվազեցնի Ձեր ամսական ապահովագրական վճարը:**
 Անձ էք, ում եկամուտը կազմում է \$28,725-ից \$45,960	Հարկային վարկեր, որոնք կնվազեցնեն Ձեր ամսական ապահովագրական վճարը:**
 Անձ էք, ում եկամուտը կազմում է ավելի քան \$45,960	Դուք իրավունակ չեք լինի ստանալու պետական օժանդակություն, սակայն Դուք դեռևս կարող եք ձեռք բերել ապահովագրություն Covered California-ի միջոցով:
 Չորս անձից բաղկացած ընտանիք, որի եկամուտը կազմում է ավելի պակաս քան \$32,499	Medi-Cal, անվճար պետական ծրագիր:
 Չորս անձից բաղկացած ընտանիք, որի եկամուտը կազմում է \$32,499-ից \$58,875	Օգնություն՝ գրպանից վճարվող ծախսերի համար, օրինակ՝ նվազագույն չափահավաքված գումար, համավճար և հարկային արտոնություններ (լրավճար), որը կնվազեցնի Ձեր ամսական ապահովագրական վճարը:**
 Չորս անձից բաղկացած ընտանիք, որի եկամուտը կազմում է \$58,875-ից \$94,200	Հարկային վարկեր, որոնք կնվազեցնեն Ձեր ամենամսյա վճարվող գումարը:**
 Չորս անձից բաղկացած ընտանիք, որի եկամուտը կազմում է ավելի քան \$94,200	Դուք իրավունակ չեք լինի ստանալու պետական օժանդակություն, սակայն Դուք դեռևս կարող եք ձեռք բերել ապահովագրություն Covered California-ի միջոցով:

* Եկամտի մակարդակը հիմնված է 2013թ. տվյալների վրա

** Դուք պետք է գրանցվեք Covered California-ի միջոցով, որպեսզի հարկային վարկեր ստանալու իրավունակ լինեք: